ՀԱՄԱՅՆԱԿԱՆ ԿՅԱՆՔ

ՀԱՄԱՅՆՔ

Եթե կարիք լիներ հակիրճ կերպով բնորոշել հասարակական զարգացման այն փուլը, որի վրա գտնվում էր Անդրկովկասի հայ բնակչությունը ռուսական տիրապետության հաստատման միջոցին, այդ ժամանակվա հասարակարգը կարելի էր անվանել գերդաստանային, այսինքն այնպիսին, որտեղ հասարակության հիմնական բջիջը կազմում էր գերազանցորեն մի քանի ամուսնական զույգերից և նրանց երկու-երեք սերունդներից բաղկացած բազմանդամ ընտանեկան ու տնտեսական միությունը՝ գերդաստանը։ Նույնիսկ այնպիսի մեծ կենտրոնում, ինչպիսին էր այն ժամանակվա Տփղիսը, որտեղ վրացական պետական կազմակերպության մեջ դասակարգային շերտավորումը համեմատաբար ավելի խորացած էր և բարդված, քան թե Անդրկովկասի այլ վայրերում, հայկական բնակչության մեջ գերիշխում էր գերդաստանային կազմակերպությունը ոչ միայն աշխատավորների և մանր առևտրականների խավի, այլև խոշոր վաճառականների՝ մօքալաքէ-ների՝ առաջնակարգ ֆաղֆրցի-ների ու իշխանական տների մեջ։ Հին Տփղիսում Ջիթախենք, Ումիկենք, Գուլուլենք, Խատիսենք, Շերմազանենք կազմում էին մի-մի դեռ անբաժան և տնտեսապես ներքուստ սերտ շաղկապված գերդաստաններ: Բեհբութենց իշխանական տունն իր յոթանասուն անդամներով միատեղ, միևնույն դարպասում էին ճաշում։ Միայն հիվանդներն ու ծերունիները ստանում էին իրենց բաժինն առանձին։ Նույնպես և Զանգեզուրի հայության մեջ XIX դ. սկզբում, երբ Ղարաբաղի Իբրահիմ խանը ճանաչեց ռուսական կայսեր հովանավորությունը և իր երկիրը ռուսական պետության հետ միացավ, բազմանդամ գերդաստանն էր կազմում բացառապես միայն գյուղերում զետեղված համայնքների ստորագույն բջիջը՝ ծուխը: Ծերունիներից հավաքածս տեղեկությունները հիմք են տալիս պնդելու, որ ոչ միայն հնուց բնիկ տեղացի բնակչության մեջ, այլև ռուսական տիրապետության առաջին տասնամյակներում գավառում վերահաստատված դրսից եկած գյուղական համայնքներում ծուխը միացնում էր մի քանի ամուսնական զույգեր իրենց երկու-երեք սերունդներով միատեղ մի հարկի տակ, մի տան մեջ ապրողներին։ Միայն վաղուց անցած էր այն ժամանակը, երբ ամբողջ գյուղը մի տուն էր և գյուղապետն իրոք տանուտէր էր։ Զանգեզուրում տանուտէր կոչումը վաղուց մոռացված էր և փոփոխված էր ֆօխվայի կամ մէլիքի[1]: Ճշմարիտ է՝ հին գյուղերում թաղերը հաճախակի

[1] Շիկահող գյուղ։